

**Հայ պարբերական մամուլի պատմություն.
1920–1922 թթ., հատոր 2, Եր., ՀՀ ԳԱԱ
Պատմության ինստիտուտ, 2017, 787 էջ*:**

Բանալի բառեր – արևելահայ մամուլ, արևմտահայ մամուլ, պատմաքննական մեթոդ, հետազոտություն, կառուցվածք, պարբերական, թեմատիկ բաժին, խորագիր, կուսակցություններ:

Ավելի քան երկու դար հայ պարբերական մամուլն իր էջերում անփոփել է մեր ժողովրդի անցած ճանապարհի բախտորոշ շրջանները, դարձել նրա կյանքի տարեգիրը: Ուստի վաղուց հասունացել էր հայ մամուլի պատմությունը համահավաք քննական տեքստի վերածելու խնդիրը, որը, հատկապես մեր օրերում, խիստ կարևոր է նրա արժևորման ու գնահատման համար:

2006 թվականին հայ մամուլի պատմաբանների համատեղ տքնաջան աշխատանքի արդյունքում Կահիրեում լույս տեսավ «**Հայ պարբերական մամուլի պատմություն (XVIII-XIX դարեր)**» կոլեկտիվ աշխատության առաջին հատորը: Նրա մեջ հետազոտվել ու արժևորվել են հայ լրագրության հիշյալ շրջանի առավել հայտնի պարբերականները: Վերջերս այս դժվարին, բայց շատ շնորհակալ գործի հեղինակները ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարակական-քաղաքական մտքի պատմության բաժնի նախաձեռնությամբ (բաժնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ա. Խառատյան) հաջորդ լուրջ ձեռքբերումն արձանագրեցին. լույս տեսավ «**Հայ պարբերական մամուլի պատմություն (1900–1922)**» աշխատության երկրորդ ծավալուն հատորը:

Թեև ժամանակահատվածը փոքր է՝ շուրջ քսան տարի, սակայն 20-րդ դարասկիզբը հրատարակված պարբերականների առատությամբ (1017 անուն) առանձնակի տեղ է գրավում հայ մամուլի պատմության մեջ: Այս պարագայում հեղինակների առջև ծառայած կարևոր խնդիրներից մեկը **կառուցվածքային հստակ բաժանում** կատարելն էր: Կարծում ենք՝ ձիշտ լուծում է գտնվել. մեկ ընդհանուր բաժնի ներքո խմբավորվել են արևելահայ, նույն կերպ նաև արևմտահայ պարբերականները, այնուհետև՝ գաղթավայրերի և կուսակցությունների մամուլի օրգանները: Գիրքը եզրափակվում է «Հայաստանի առաջին Հանրապետության մամուլը» գլխով՝

*Ընդունվել է տպագրության 3.01.2018:

դառնալով դարասկզբի երկու տասնամյակների հայ մամուլի գործունեության ամփոփման տրամաբանական ավարտը:

Հաջորդ խնդիրը պարբերականներն ըստ **իրենց կարևորության ու նշանակության** ներկայացնելն էր, որի առումով ևս նախապես մշակված մոտեցման անհրաժեշտություն էր զգացվում: Ուստի գրքի խմբագիրները (Ա. Խառատյան, Լ. Գևորգյան) առաջաբանում տեղեկացնում են այդ մասին. «Բնականաբար, սույն հատորում ընդգրկվել են հիմնականում ամենակարևոր պարբերականները, որոնք լույս են տեսել արևելահայ և արևմտահայ մշակույթի կենտրոններում, ինչպես և գաղթօջախներում՝ Սփյուռքում: Կարճակյաց հրատարակությունները, որոնք, թվում է, տևական հասարակական նշանակություն չէին կարող ունենալ, բնութագրվում են տվյալ միջավայրի հայ ընթերցողի մտավոր պահանջմունքների մասին ըստ հնարավորին ընդարձակ պատկերացում տալու նպատակով»¹: Հատկապես վերջին դիտարկումը ուշագրավ նրբերանգ ունի և արդարացնում է առաջադրված նպատակը. ուրիշ էլ որտե՞ղ, եթե ոչ մամուլում, թեկուզ և ոչ առաջնային դերակատարում ունեցած պարբերականներում, կարելի է պատկերացում կազմել, շուրջ հարյուր տարվա հեռավորությամբ հայության տարբեր հատվածների կյանքի, գործունեության, մտահոգևոր պահանջմունքների մասին:

Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ հատորում ուսումնասիրությունները կատարվել են **պատմաբանասիրական բնության և արժևորման** սկզբունքներով: Այս մեթոդը թերևս առավել հարմար է փաստառատ, ծավալուն նյութը ընթերցողին մատուցելու առումով, քանի որ հետազոտողը հնարավորություն ունի ուսումնասիրության մեջ ըստ անհրաժեշտության և՛ **ընդհանրական** դիտարկումներ, և՛ **կոնկրետ** նկարագրություններ ու վերլուծություններ անելու: Պատկերն առավել պարզ կդառնա, եթե նշենք, որ գրքում ներկայացվում են առանձնաբար՝ 90-ից ավելի պարբերականներ ու ևս մի քանի տասնյակը՝ ընդհանուր խորագրերի ներքո («Արևելահայ երգիծական մամուլ», «Մանկապատանեկան մամուլ», «Արցախի հայ մամուլ», «Հայաստանի առաջին Հանրապետության մամուլ») և այլն):

Ընդհանրական բնութագրում-վերլուծությունները հիմնականում արված են աշխատության գլուխներում զետեղված խորագրերի ներքո: Ըստ այդմ՝ ընթերցողին հնարավորություն է տրվում ընդհանուր պատկերացում կազմելու տվյալ աշխարհագրական տարածքում հրատարակված հայկական պարբերականների գաղափարական, բովանդակային ու թեմատիկ ուղղությունների մասին, ներկայացնելու նրանց գործունեության այս կամ այն, առավել ընդգծված ոլորտները, քաղաքական-հասարակական ու մշակութային կողմնորոշումները և այլն: Այսպես, երկրորդ գլխում, «Արևմտահայ մամուլը (1900-1914)» խորագրի ներքո (հեղինակ՝ Ա. Խառատյան), նախքան կոնկրետ պարբերականներին անդրադառնալը, առանձնացվում են դարասկզբի առաջին երկու տասնամյակներում արևմտահայ մամուլի գործունեության փուլերը, որոնց հիմքի վրա հստակ գծագրվում են նաև պար-

¹ «Հայ պարբերական մամուլի պատմություն. 1900-1922 թթ.», հատ. 2, խմբ.՝ Ա. Խառատյան, Լ. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Եր., 2017, էջ 5:

բերականների հիմնական ուղղությունները: Մասնավորապես նշվում է, որ 1900–1908 թթ. «մինչև համիդյան վարչակարգի վախճանը, հայ մամուլն ու հրապարակախոսությունը խիստ ճնշումների ներքո գրկվել էին ազգային ու հասարակական թեմաներից»²: Երկրորդ փուլում՝ երիտթուրքական իշխանությունների հաստատումից հետո, «ազգային ու հասարակական բովանդակության նոր թերթերի հետ միասին հատկապես ծաղկում է ապրում երգիծական մամուլը»³, իսկ 1912–1914 թթ., երբ եվրոպական տերությունների նախաձեռնությամբ կրկին ակտիվանում է Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու հարցը, մամուլն ավելի հաճախ է անդրադառնում գավառներում հայ բնակչության աղետալի վիճակին:

Քաղաքական–հասարակական կյանքի հանդեպ մամուլի օրգանների դիրքորոշումների ընդհանրական այս բնութագրումները այնուհետև հնարավորություն են ընձեռում խորանալու այս կամ այն պարբերականի **թեմատիկ բաժինների ու խորագրերի մեջ**, անդրադառնալու հոդվածագիրներին, նրանց առաջադրած խնդիրներին և այլն: Ընդհանուրի և մասնավորի փոխհարաբերության այս սկզբունքը, որ հատկանշական է պատմաբանասիրական քննության մեթոդին, հաջող համադրությամբ ի հայտ է եկել գրքի համապատասխան հատվածներում:

Առաջաբանում խմբագիրները նշում են, որ հատորում ներառված պարբերականների մեծագույն մասը **ուսումնասիրվում է առաջին անգամ**: Խոսքը հատկապես վերջին երեք գլուխների մասին է: Միայն երրորդ գլխում, որ վերնագրված է «Հայ գաղթավայրերի մամուլ», առանձնաբար ներկայացված են եգիպտահայ, ֆրանսահայ, բուլղարահայ, իրանահայ և ամերիկահայ մամուլի՝ այդ շրջանի պարբերականները, որոնց զգալի մասը մինչ օրս հայտնի չէր ընթերցողին: Ի դեպ, եգիպտահայ մամուլի օրգանները նկարագրվել են նաև թեմատիկ խորագրերի ներքո (հասարակական–քաղաքական պարբերականներ, մանկավարժական և գրական պարբերականներ, երգիծական պարբերականներ):

Ծավալուն տեղ է հատկացված 20–րդ դարասկզբին լայն գործունեություն ծավալած **ազգային կուսակցությունների մամուլին** (գլուխ չորրորդ): Կուսակցական մամուլի սկզբնավորումը առանձին գլխով հետազոտվել էր նաև առաջին հատորում: 20–րդ դարասկզբին կուսակցական մամուլը թևակոխում է որակական նոր փուլ և, կապված դարասկզբի քաղաքական բուռն իրադարձությունների հետ, մեծապես կանխորոշում արևմտահայ և արևելահայ մամուլի դիմագիծը:

Խորհրդային տարիներին, ցավոք, գաղափարական մենիշխանության պայմաններում հայ մամուլի պատմաբանները սևեռված էին բոլշևիկյան պարբերականների վրա՝ չափազանցնելով նրանց դերը և ստվերի տակ թողնելով մյուս կուսակցությունների մամուլի օրգաններին: Մեր օրերում նման խտրականությունը հաղթահարվում է: Ուստի երկրորդ հատորում փորձ է արվել գաղափարական–բովանդակային և թեմատիկ մատուցման առումով նույն հարթության վրա բնութագրել դարասկզբին գործած և տարբեր կուսակցությունների պատկանող պարբերականները: Եվ եթե,

² Նույն տեղում, էջ 214:

³ Նույն տեղում, էջ 216:

օրինակ, դաշնակցականների, հնչակյանների, սահմանադրական-ռամկավարների մի շարք թերթեր ու հանդեսներ այս կամ այն կերպ ծանոթ էին հայ ընթերցողին, ապա Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության («սպեցիֆիկների») մամուլի օրգանները հայտնի էին միայն նեղ մասնագետների շրջանում: Ուստի ողջունելի են վերջիններիս քաղաքական դիրքորոշման և 20-րդ դարակազմին հայության կյանքի լուսաբանման մասին սպեցիֆիկյան որոշ պարբերականների բնութագրում-վերլուծությունների փորձերը:

Ուզում ենք առանձնահատուկ նշել կուսակցական մամուլին առնչվող մի նկատառում: Խոսքը դաշնակցական երկու պարբերականների՝ «Հորիզոն» և «Ազատամարտ» թերթերի մասին է, որոնք, իբրև օրաթերթեր, հսկայական դեր են խաղացել 1910-ական թվականներին հայ ժողովրդի արևելահայ ու արևմտահայ հատվածներում հասարակական-քաղաքական միտքը կազմակերպելու, ազգի հոգևոր-մշակութային կյանքը համակողմանիորեն լուսաբանելու գործում: Իրենց լայնախոհ գործունեությամբ այս թերթերն ի սկզբանե դուրս էին եկել նեղ կուսակցական շրջանակներից, **ձեռք բերել համազգային հնչելություն և ընթերցողների մեծ լսարան:** Ցավոք, դաշնակցական պատկանելության պատճառով հատորում նրանք ներկայացված չեն առանձին վերնագրով, ինչն առկա է, ասենք, «Մշակի», «Մուրճի» պարագայում: Բացառություն անելն այս դեպքում, կարծում ենք, տեղին կլիներ:

Հատորը եզրափակվում է «Հայաստանի առաջին Հանրապետության մամուլ» գլխով: Թեև առանձին գրքույկով և ավելի ծավալուն այս բաժինը լույս էր տեսել դեռևս 2005-ին (երկու դեպքում էլ հեղինակը Ա. Հակոբյանն է)⁴, սակայն հանիրավի մոռացված այս շրջանը հայ մամուլի պատմության համապատկերում ներկայացվում է առաջին անգամ:

Նշեցինք, որ այս մեծածավալ աշխատությունը (ինչպես և նախորդ հատորը) հրատարակվել է հայ մամուլի պատմաբանների **համատեղ ջանքերով**. հարգանքի արժանի գործ, քանի որ այն իրականացնելու համար անհրաժեշտ էր ունենալ նվիրյալի համբերություն, համառություն ու կամք, հաղթահարել հարյուրավոր պարբերականներ ուսումնասիրելու ոչ դյուրին փորձությունը: Հեղինակները, անելիքի հստակ գիտակցմամբ, փորձել են պահպանել գիտական օբյեկտիվության սահմանները՝ աշխատելով մեր ժամանակների պահանջներին համահունչ:

Այս ամենով հանդերձ, ավելի քան երկու հարյուր տարվա հայ նշանավոր պարբերականները դեռևս սպասում են գալիք հետազոտողներին: Ահռելի տեղեկատվություն և հայ ժողովրդի կյանքը ներկայացնելու վերլուծական-հրապարակախոսական բարձր մակարդակ ունեցող թերթերը, հանդեսներն ու ամսագրերը հարկ է ուսումնասիրել ոչ միայն պատմաբանասիրական, այլև **մշակութաբանական, սոցիոլոգիական, քաղաքագիտական, հոգեբանական քննությամբ:** Նման հետազոտությունները լայն հեռանկարներ կբացեն մեր ժողովրդի անցյալը խորությամբ և նորովի իմաստավորելու համար:

⁴ Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն (1918-1920 թթ.), Եր., Հեղին. հրատ., 2005:

«Հայ պարբերական մամուլի պատմության» երկու հատորների հրատարակությունն արդեն իսկ կարևոր ներդրում է այս ճանապարհին:

Դավիթ Վ. Պետրոսյան
Բանաս. գիր. դոկտոր

Դավիթ Վ. Պետրոսյան – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են 20-րդ դարասկզբի հայ գրականության և մամուլի պատմության հիմնախնդիրները («Գրական բանավեճերը 20-րդ դարասկզբի հայ մամուլում», Եր., 2007), հեղինակել է ժուռնալիստիկայի, գրականության և մշակութաբանության փոխառնչություններին, նրանց զարգացման արդի միտումներին նվիրված ուսումնասիրություններ («Պատում, մեղիատեքստ, հակառակ հեռանկար», Եր., 2017, «Причуды инверсии: текст и обратная перспектива», Saarbrücken, 2017) և հոդվածներ:

Summary

The History of Armenian Periodicals. 1920–1922, volume 2, Yerevan, Institute of History NAS RA, 2017, 787 pages.

David V. Petrosyan

Key words – Eastern–Armenian press, Western–Armenian press, historical–analytical method, research, structure, periodical press, thematic department, title, parties.

The review has considered a number of issues related to the content, structure and themes of the second volume of the recently published “History of Armenian Periodicals.” The work is noteworthy for clear structural divisions, a concept developed to represent the importance and significance of a large-scale project.

Apart from referring to the well-known periodicals of Eastern and Western Armenians, the volume also represents and depicts in different chapters the Armenian press in the Armenian colonies (Egypt, France, Bulgaria, Iran, the USA) and parties, most of which are unknown to the reader.

Through the combination of general observations and specific descriptions typical for the historical – philological method, the book presents the complete picture of the Armenian press in the first two decades of the 20th century.

История армянских периодических изданий. 1920–1922, том 2, Ереван, Институт истории НАН РА, 2017, 787.

Давид В. Петросян

Ключевые слова – восточноармянская пресса, западноармянская пресса, историко-аналитический метод, исследование, структура, периодическая печать, тематический отдел, заглавие, партии.

В обзоре рассмотрены вопросы, связанные с содержанием, структурой и тематикой второго тома недавно опубликованной «Истории армянских периодических изданий». Работа отличается четкими структурными делениями, концепцией, разработанной для представления всей важности и значимости крупномасштабного проекта.

Помимо упоминания известных периодических изданий восточных и западных армян, в томе отдельными главами представлены также органы печати армянских колоний (Египет, Франция, Болгария, Иран, США) и политических партий, большинство из которых не известны читателю.

В сочетании с общими наблюдениями и конкретными описаниями, типичными для историко-филологического метода, в книге представлена полная картина армянской прессы первых двух десятилетий XX века.

REFERENCES

1. Hay parberakan mamuli patmutyun. 1900–1922, hator 2 (xmb. A. **Kharatyan, L. Gevorgyan**), Erevan, NH GAA patmutyan institute, 2017. **(In Armenian)**
2. **Hakobyan A.** Hayastani Hanrapetutyan parberakan mamuli patmutyun (1918–1920 tt. Erevan, Heghin. Hrat. 2005. **(In Armenian)**

ՀՀ-ի համահայկեակազմի հանձնաժողովի 1 (61), հունվար-մարտ, 2018